

ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՇՆԱՐԿ

ԱՄԿ ԱՊՀԿ 2001  
ILO OHS 2001



ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ. ԺՆԵՎ

---

Для получения дальнейшей информации о МОТ-СУОТ 2001/ILO-OSH 2001, просим обращаться:

“Safework” – Целевая программа МОТ по безопасности и здоровью на работе и окружающей среде

Международная Бюро Труда

4, route des Morillons CH-1211 Женева/Geneva 22 Швейцария/Switzerland

Тел.: (+41 22) 799 4715; факс: (+41 22) 799 6878

E-mail: [safework@ilo.org](mailto:safework@ilo.org)

либо

Московское бюро МОТ

Москва, ул. Петровка, д. 15, кв. 23.

Тел. (8 095) 933-08-13; факс: (8 095) 933-08-20

Электронная почта: [moscow@ilo.org](mailto:moscow@ilo.org)

---

ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՂԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՇՆԱՐԿ

ԱՄԿ ԱՊՀԿ 2001  
ILO OHS 2001

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ • ԺՆԵՎ

Սույն ձեռնարկը թարգմանվել և պատրաստվել է հրատարակության համար ՀԳՀ - «Հայ Կոնսալտ» Խորհրդատվական Հիմնադրամի կողմից Աշխատանքի Միջազգային Կազմակերպության Մոսկովյան գրասենյակի պատվերով:

Առաջին անգամ հրատարակվել է անգլերեն լեզվով 2001թ-ին: Հրատարակության վրա տարածվում է հեղինակային իրավունքի պաշտպանության միջազգային կոնվենցիայի 2 արձանագրությունը: Դրա հետ մեկտեղ ոչ մեծ հատվածներ կարող են վերահրատարակվել առանց հատուկ թույլտվության: Վերահրատարակման կամ թարգմանության համար անհրաժեշտ է գրավոր դիմել ԱՄԿ-ի հրատարակման բաժին ԱՄԿ-CH-1211 ժնև 22, Շվեյցարիա:

ILO / MOT

Руководство по системам управления охраной труда. MOT-CYOT 2001 / ILO-OSH 2001.

Женева: Международное бюро труда, 2003.

ISBN 92-2-411634-5

Առանցքային բառեր: աշխատանքի պաշտպանություն, ազգային մակարդակ, ձեռնարկության մակարդակ, տեխնիկական գործոններ:

Հրատարակվել է անգլերեն լեզվով:

*Guidelines on occupational safety and health management systems*, ILO-OSH 2001 (ISBN 92-2-111634-4, Geneva)

Նաև հրատարակվել է ֆրանսերեն լեզվով: *Principes directeurs concernant les systèmes de gestion de la sécurité et de la santé au travail*, ILO-OSH 2001 (ISBN 92-2-211634-8, Geneva, 2002); ինչպես նաև իսպաներեն լեզվով: *Directrices relativas a los sistemas de gestión de la seguridad y la salud en el trabajo*, ILO-OSH 2001 (ISBN 92-2311634-1, Geneva, 2002)

Նաև հրատարակվել է հայերեն լեզվով, Աշխատանքի պաշտպանության կառավարման համակարգի ձեռնարկ, ԱՄԿ-ԱՊՀԿ 2001, ILO-OHS 2001 (ISBN 92-2-511634-\*, Երևան, 2009)

ԱՄԿ-ի կողմից հրատարակության մեջ օգտագործված անվանումները համապատասխանում են ՄԱԿ-ի կողմից ընդունված պրակտիկային և նյութի ներկայացումը չի հանդիսանում ԱՄԿ-ի այս կամ այն կարծիքի արտահայտությունը, որը վերաբերվում է ցանկացած երկի և տարածքի ինքնիշխանության կամ սահմանի հաստատմանը:

Հոդվածում ներկայացված կարծիքների, հետազոտությունների և այլ նյութերի պատասխանատվությունը ընկնում է նրանց հեղինակների վրա և ԱՄԿ-ի կողմից հրատարակման փաստը չի նշանակում, որ ԱՄԿ-ն կիսում է նրանց կարծիքները:

ԱՄԿ-ի հրատարակությունները կարող եք ձեռք բերել գրքերի հատուկ բաշխողների կամ տարբեր երկրներում գործող ԱՄԿ-ի գրասենյակներից: Կամ էլ ուղղակի դիմել հետևյալ հասցեով: ILO Publications, International Labour Office, CH-1211 Geneva 22, Switzerland Կատալոգը կամ նոր հրատարակավող գրքերի ցանկը կստանաք անվճար նշված հասցեում կամ էլեկտրոնային հասցեով, [pubvenue@ilo.org](mailto:pubvenue@ilo.org)

# ՆԱԽԱԲԱՆ

ԱՄԿ-ի պատմական առաքելությունն /մանդատ/ է հանդիսանում պաշտպանել աշխատողներին աշխատանքի հետ կապված թուլություններից հիվանդություններից, վնասվածքներից: Հիվանդությունները և վնասվածքները աշխատանքային գործունեության անխուսափելի ուղեկիցներն են, իսկ աղքատությունը չպետք է արդարացում լինի աշխատողի անվտանգության և առողջության նկատմամբ անուշադրության համար: ԱՄԿ-ի առաջնային նպատակն է աջակցել և հնարավորություններ ստեղծել կանանց և տղամարդկանց ստանալու արժանի և արտադրողական/արդյունավետ/ աշխատանք ազատության, հավասարության, սոցիալական պաշտպանության պայմաններում: Մենք միավորել ենք այս բոլորը մեկ «արժանապատիվ աշխատանք» հասկացությամբ: Արժանապատիվ աշխատանքը անվտանգ աշխատանքն է: Իսկ անվտանգ աշխատանքը հանդիսանում է դրական գործոն արտադրողականության և տնտեսական աճի բարձրացման համար:

Արդի տեխնոլոգիական առաջընթացը և մրցակցության ինտենսիվ ճաշումը փոփոխում են աշխատանքի պայմանները, գործընթացն ու կազմակերպումը: Առաջնային նշանակությունը տրվում է օրենսդրությանը, սակայն այն բավարար չէ, որպեսզի ուղղորդի այդ փոփոխությունները և հասնի նոր վտանգների ու ռիսկերի: Կազմակերպությունը նույնպես պետք է մշտապես անդրադարձնա աշխատանքի պաշտպանության ոլորտին առնչվող մարտահրավերներին և մշակի կառավարման դինամիկ ռազմավարություն: ԱՊՀԿ-ի դեկավարությունը անդրադարձնում է այդ խնդիրներին:

Ղեկավարությունը նախապատրաստված է լայնամասշտաբ մոտեցման հիմքով ԱՄԿ-ի մասնակցությամբ և ներառում է սոցիալ-աշխատանքային եռակողմ հարաբե-րություններ և այլ շահագրգիռ կողմեր: Այն հիմնված է ամբողջ աշխարհում ընդունված աշխատանքի պաշտպանության սկզբունքների վրա և համապատասխանում է միջազգային աշխատանքային ստանդարտներին: Դրա հետևանքով այն յուրահատուկ և հզոր գործիք է կազմակերպություններում և նրա սահմաններից դուրս անվտանգության ապահովման կայուն մշակույթի զարգացման համար: Այն օգտակար է բոլորի համար՝ աշխատողների, գործատուների, անվտանգության ապահովման համակարգի և առողջության և շրջակա միջավայրի պահպանության համար:

ԱՄԿ-ն պատիվ է ունեցել գլխավորել նշված Զեւնարկի մշակումը: Համոզված եմ, որ այն կդաշնա անփոխարինելի գործիք աշխատողների, գործա- տունների ու նրանց կազմակերպությունների, ազգային հիմնարկների և բոլորի համար, ով ներդրում ունի առավել անվտանգ և առողջ աշխատատեղերի ապահովմանը:

Խուան Սոմավիա

ԱՄԿ-ի գլխավոր տնօրեն

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	5
1. Նպատակները .....	6
2. ԱՊՀԿ-ի ազգային հիմքերը .....	7
2.1.Ազգային քաղաքականությունը .....	7
2.2. Ազգային Ղեկավարությունը .....	8
2.3. Մասնագիտացված Ղեկավարությունը .....	8
3. ԱՊՀԿ-ն կազմակերպությունում .....	9
Քաղաքականություն .....	10
3.1.Աշխատանքի պաշտպանության քաղաքականությունը .....	10
3.2.Աշխատողների մասնակցությունը .....	10
Կազմակերպում .....	11
3.3.Պարտականությունները և պատասխանատվությունը .....	11
3.4.Կոմիտենություն և նախապատրաստվածություն .....	12
3.5. ԱՊՀԿ-ի փաստաթղթավորումը .....	13
3.6.Տեղեկատվության հաղորդումն ու փոխանակումը .....	13
Պլանավորում և իրականացում .....	14
3.7. Ելակետային վերլուծություն .....	14
3.8. ԱՊՀԿ-ի պլանավորումը,գարգացումը և իրագործումը (СҮОТ) .....	14
3.9. Աշխատանքի պաշտպանության նպատակները .....	15
3.10.Վտանգների կանխարգելումը .....	15
3.10.1. Նախազգուշական և կարգավորող միջոցներ .....	15
3.10.2. Փոփոխությունների կառավարումը .....	16
3.10.3. Վրարային իրադարձությունների նախազգուշացումը, պատրաստվածությունը դրանց նկատմամբ և վերաբերմունքը .....	16
3.10.4. Մատակարարում .....	17
3.10.5. Պայմանադրային աշխատանքներ .....	17
Գնահատում .....	18
3.11. Մոնիթորինգի իրականացումը և արդյունքների գնահատումը .....	18
3.12. Հետաքրնություն կապված աշխատանքային վնասվածքների, առողջության վատրարացման,հիվանդության,միջադեպերի հետ և դրանց ազդեցությունը անվտանգության և առողջության պահպանման գործընթացի վրա .....	19
3.13. Ստուգում / Ակտիվիտ .....	20
3.14. ԱՊՀԿ-ի արդյունավետության վերլուծությունը ղեկավարության կողմից .....	21
Կատարելագործում .....	22
3.15. Նախազգուշացնող և ճշգրտող գործողություններ .....	22
3.16. Անընդհատ կատարելագործում .....	22
Մասնագիտական բառարան .....	23
Գրականության ցանկ .....	26
Հավելված:ԱՊՀԿ-ի փորձագետների ժողովի մասնակիցների և հետևողների ցանկը, Ժնև, 2001թ. ապրիլի 19-27 .....	28

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունում<sup>1</sup> աշխատանքի պաշտպանության կառավարման համակարգի /այսուհետ ԱՊՀԿ/ ներդնումը դրական ազդեցություն է ունենում ինչպես վտանգների ու ռիսկերի, այնպես էլ արտադրողականության վրա և ներկայումս ընդունված է կառավարությունների, գործատուների և աշխատողների կողմից:

ԱՊՀԿ-ի Ղեկավարությունը մշակել է Աշխատանքի միաջազգային կազմակերպության /այսուհետ ԱՄԿ-/ կողմից՝ միջազգային սկզբունքներին համապատասխան, որոնք որոշվում են ԱՄԿ-ի կազմում գտնվող ներկայացուցիչների եռակողմ սոցիալ-աշխատանքային հարաբերություններով: Այդ եռակողմ մոտեցումը ապահովում է ուժ, ճկունություն և պատշաճ հիմք կազմակերպությունում անվտանգության կայուն մշակույթի զարգացման համար: Այդ իսկ պատճառով ԱՄԿ-ն մշակել է կամավորության սկզբունքով իրագործվող ԱՊՀԿ-ի Զեռնարկը, որը արտահայտում է ԱՄԿ-ի միջոցներն ու արժեքները՝ աշխատողի անվտանգության և առողջության պահպանման համար:

Ներկա Զեռնարկի գործնական երաշխիքները նախատեսված են օգտագործվել նրանց կողմից, ով աշխատանքի պաշտպանության կառավարման համար պատասխանատվություն և պարտավորույթուն է կրում: Նրանք չեն կրում իրավական պարտավորություն և ուղղված չեն ազգային օրենքների, կանոնների կամ ընդունված ստանդարտների փոփոխմանը: Այն ընդունելու համար անհրաժեշտ չէ սերտիֆիկացիա:

Գործատուն պատասխանատու է և պարտավոր է կազմակերպել աշխատանքի պաշտպանությունը: Նշված պարտավորությունների կատարման համար ԱՊՀԿ-ի իրականացումը շատ օգտակար է: ԱՄԿ-ն մշակել է այդ Զեռնարկը որպես գործնական գործիք կազմակերպություններին և իրազեկ հիմնարկություններին աջակցելու և աշխատանքի պաշտպանության անընդհատ կատարելագործելու համար:

<sup>1</sup> Նայել սույն ձեռնարկի Մասնագիտական բառարանում

# 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1. Տվյալ Զեռնարկը նպաստում է աշխատողների պաշտպանումը Վտանգներից և բացառում է աշխատանքային վնասվածքները, առողջության վատրացումները, հիվանդությունները, միջադեպերը և մահվան դեպքերը:

1.2. Ազգային մակարդակով Զեռնարկը պետք է.

- օգտագործվի ազգային հիմունքներով ԱՊՀԿ-ի ներդնման համար, իսկ հնարավորության դեպքում ամրակցվի ազգային օրենքներին և կանոններին:
- ծառայի դեկավարման ցուցումներին, կամավոր միջոցառումների զարգացման և նորմերի ու կանոնների համապատասխանեցման ուժեղացման համար, որոնք տանում են աշխատանքի պաշտպանության անընդհատ կատարելագործմանը:
- ծառայի դեկավարման ցուցումներին, հանդիսանա ԱՊՀԿ-ում ազգային և մասնագիտացված աշխատանքի պաշտպանության վհատեմների դեկավարման զարգացման համար և բավարարի կազմակերպության պահանջները նրա գործունեության չափսերին և բնույթին հաճապատասխան:

1.3. Զեռնարկը կազմակերպության մակարդակով.

- ծառայի դեկավարման ցուցումների ԱՊՀԿ-ի տարրերի ինտեգրմանը որպես ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մաս և միջոցառումների կազմակերպում, և
- խթանել կազմակերպության բոլոր անդամներին, մասնավորապես գործատումներին, սեփականատերերին, կառավարման անձնակազմին, աշխատողներին և նրանց ներկայացուցիչներին աշխատանքի պաշտպանության կառավարման մեթոդների և սկզբունքների օգտագործման և աշխատանքի պաշտպանության գործունեության անընդհատ կատարելագործման համար:

## 2. ԱՊՀԿ-Ի ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

### 2.1.Ազգային քաղաքականությունը

2.1.1. Համապատասխան ծևով պետք է որոշել կոմպետենտ հիմնարկություն կամ այլ մարմին, որը կազմավորում, իրագործում և պարբերաբար ուսումնասիրում է ազգային քաղաքականության համաձայնեցումը կազմակերպությունում ԱՊՀԿ-ի ստեղծման և զարգացման հետ: Այն պետք է կատարվի գործառուների և աշխատողների առավել ներկայացուցչական կազմակերպությունների հետ խորհրդատվությամբ և անհրաժեշտության դեպքում ընդգրկի այլ մարմիններ:

2.1.2.ԱՊՀԿ-երում ազգային քաղաքականությունը պետք է սահմանի ընդհանուր սկզբունքներ և ընթացակարգեր, որպեսզի:

- ԱՊՀԿ-ն ինտեգրվի որպես մաս կազմակերպության ընդհանուր կառավարմանը,
- կազմակերպության և ազգային մակարդակով մեղմացվի և կատարելագործվի կամավոր միջոցառումները կապված աշխատանքի պաշտպանության համակարգման, պլանավորման, իրականացման և կատարելագործման հետ:
- կազմակերպության մակարդակով աջակցի աշխատողների և նրանց ներկայացուցիչների մասնակցությունը,
- անընդհատ կատարելագործվի առանց ավելորդ բյուրոկրատիայի, վարչարարության և ծախսերի,
- աջակցի կազմակերպությունում ԱՊՀԿ-ի համագործակցությանը աշխատանքի տեսչության, աշխատանքի պաշտպանության ծառայությունների և այլ մարմինների հետ և ուղղի նրանց գործունեությունը աշխատանքի պաշտպանության կառավարման համապատասխան շրջանակները:
- գնահատի ազգային քաղաքականության արդյունավետությունը և ԱՊՀԿ-ում ազգային հիմունքների արդյունավետությունը որոշակի ժամանակաշրջանում,
- գնահատի և պրոպագանդի ԱՊՀԿ-ի արդյունավետությունը և համապատասխան միջոցներով դրանց գործնական կիրառումը
- երաշխավորի պայմանադիրներին և նրանց աշխատողներին աշխատանքի պաշտպանության այնպիսի պահանջների կիրառում, ինչպիսիք կիրառվում են բոլոր աշխատողների, այդ թվում կազմակերպության կողմից անմիջական վարձված ժամանակավոր աշխատողների նկատմամբ:

2.1.3. Ազգային քաղաքականության և դրա իրագործման հետ կապված միջոցառումների ներդաշնակեցման նպատակով կոմպետենտ հիմնարկությունը պետք է սահմանի ԱՊՀԿ-ի ազգային հիմունքները, որպեսզի:

- սահմանեն և որոշեն տարբեր հիմնարկությունների համապատասխան գործառույթներն ու պարտավորությունները, որոնք կոչված են ազգային քաղաքականության իրականացնելու և դրանք կողորդինացնելու համար, կատարեն համապատասխան միջոցառումներ:
- հրապարակեն և պարբերաբար վերանայեն Ազգային Զերնարկը կազմակերպությունում ԱՊՀԿ-ի կամավոր ու համակարգված իրականացման համար:
- համապատասխան կարգով սահմանեն հիմնարկությունների դերը, որոնք պատասխանատու են ԱՊՀԿ-ի մասնագիտացված Զերնարկներ մշակման ու առաջխաղացման համար և որոշեն նրանց համապատասխան պարտականությունները,
- ապահովեն գործառուներին, աշխատողներին և նրանց ներկայացուցիչներին կառավարման ցուցումների հասանելիությունը՝ ազգային քաղաքականության հաջողությունների օգտագործման համար:

2.1.4.Կազմակերպությունում ԱՊՀԿ-ի իրագործման աջակցման և համագործակցության համար կոմպետենտ հիմնարկությունը պետք է իրականացնի միջոցառումներ և ապահովի աշխատանքի տեսչության, աշխատանքի պաշտպանության և այլ հասարակական ու մասնավոր ծառայությունների, գործակալությունների կամ հիմնարկությունների՝ ներառյալ դեկավարման ցուցումներով մասնագիտացված առողջապահպանական կազմակերպությունների գործունեությունը:

## 2.2. Ազգային Զեռնարկ

2.2.1.ԱՊՀԿ-ի համակարգված ներդնման համար ազգային Զեռնարկը պետք է մշակած լինի այնպիսի մոտեցում, որը բերված է 3 գլխում՝ հաշվի առնելով ազգային պայմաններն ու փորձը:

2.2.2.ԱՄԿ-ի Զեռնարկը, ազգային Զեռնարկը և մասնագիտական Զեռնարկը պետք է փոխկապակցված լինեն միմյանց և ունենան բավականաչափ ձկումություն՝ անմիջապես կամ հարմարեցված կիրառվի կազմակերպությունում:


## 2.3. Հատուկ Զեռնարկ

2.3.1. Հատուկ Զեռնարկը արտահայտում է ԱՄԿ-ի Զեռնարկի ընդհանուր նպատակները, ներառում է Ազգային Զեռնարկի հիմնական տարրերը և կազմակերպության կամ դրանց խմբի հատուկ պայմաններն ու պահանջները՝ հաշվի առնելով, մասնավորապես.

- նրանց չափսերը /խոշոր, միջին, մակր/ և ենթակառուցվածքները և
- վտանգների տեսակներն ու ռիսկերի մակարդակները:

2.3.2. ԱՊՀԿ-ում ազգային հիմքերի և նրանց հիմնական տարրերի կայլ ներկայացված է նկար 1-ում:


Նկար 1.ԱՊՀԿ-ի ազգային հիմունքների տարրերը



### 3. ԱՊՀԿ-Ն ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աշխատանքի պաշտպանության ապահովումը՝ ներառյալ աշխատանքի պաշտպանության պահանջների համապատասխանությունը, սահմանվում է ազգային օրենքներով ու կանոններով և մտնում են գործատուների պարտավորությունների ու պատասխանատվությունների մեջ: Գործատուն պետք է ցուցադրի կազմակերպությունում աշխատանքի պաշտպանության իր բացարձակ իշխանությունը և կազմավորի ԱՊՀԿ: ԱՊՀԿ-ի հիմնական տարրերը՝ քաղաքականությունը, կազմակերպումը, ալանավորումն ու իրագործումը, գնահատումն ու կատարելագործումը, ներկայացված են նկար 2-ում:

Նկար 2.Աշխատանքի Պաշտպանության Համակարգի հիմնական տարրերը





## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### 3.1.Աշխատանքի պաշտպանության քաղաքականությունը

3.1.1.Գործատում՝ խորհրդակցելով աշխատողների և նրանց ներկայացուցիչների հետ, պետք է գրավոր տեսքով շարադրի աշխատանքի պաշտպանության քաղաքականությունը, որը պետք է.

- հաճապատասխանի կազմակերպության յուրահատկություններին, չափերին և գործունեության բնույթին,
- լինի հակիրձ, պարզ շարադրված, ունենա ամսաթիվ և գործողության մեջ մտնի գործատուի ստորագրությամբ, կամ նրա կողմից տրված լիազորագրի կամ էլ կազմակերպության բարձրաստիճան պաշտոնյայի պատասխանատվությամբ:
- աշխատավայրում Տարածվի և հասանելի լինի բոլորի համար
- վերլուծվի անընդհատ պիտանելիության համար
- հասանելի լինի արտաքին շահագրգիռ կողմերին:

3.1.2. Աշխատանքի պաշտպանության քաղաքականությունը պետք է ներառի նվազագույնը սկզբունքների և նպատակների հետևյալ աղբյուրները, որոնց կատարումը կազմակերպությունը վերցնում է իր վրա.

- կազմակերպության բոլոր մասնակիցների անվտանգության ապահովումն ու առողջության պահպանումը՝ աշխատանքային վնասվածքների, առողջության վատթարացման, հիվանդությունների և միջադեպերի մասին նախազգուշացման միջոցով:
- աշխատանքի պաշտպանության վերաբերյալ համապատասխան ազգային օրենքների ու կանոնների, կամավոր ծրագրերի, կոլեկտիվ համաձայնությունների և այլ պահանջների հետևելը, որը կազմակերպությունը պարտավորվել է կատարել:
- Աշխատողների և նրանց ներկայացուցիչների հետ խորհրդատվության անցկացման և ԱՊՀԿ-ի բոլոր տարրերին նրանց ներգրավման երաշխավորումը:
- ԱՊՀԿ-ի գործառույթների անընդհատ կատարելագործում:

3.1.3. ԱՊՀԿ-ն պետք է կազմակերպության կառավարման այլ համակարգերի հետ լինի համատեղելի և միավորված:

### 3.2.Աշխատողների մասնակցությունը

3.2.1. Կազմակերպությունում աշխատողների մասնակցությունը ԱՊՀԿ-ին հանդիսանում է առավել կարևոր տարրը:

3.2.2. Գործատում պետք է գրավի աշխատողներին և նրանց ներկայացուցիչներին աշխատանքի պաշտպանության մասին խորհրդատվությունների անցկացման, տեղեկացվածության և որակավորման բարձրացմանը, որոնք կապված են իրենց աշխատանքի հետ՝ ներառյալ վթարային միջոցառումները:

3.2.3. Գործատուն պետք է այնպես իրականացնի աշխատողների և նրանց ներկայացուցիչների աշխատանքի պաշտպանության հետ կապված միջոցառումները, որպեսզի նրանք ժամանակ և հնարավորություն ունենան մասնակցելու կազմակերպության ԱՊՀԿ-ի գործընթացներին, ալանավորմանն ու իրագործմանը, գնահատմանն ու կատարելագործմանը:

3.2.4. Գործատուն պետք է համապատասխան կարգով երաշխավորի աշխատանքի պաշտպանության կոմիտեի ստեղծումը, կազմավորումն ու արդյունավետ գործարկումը՝ ազգային օրենքների և պրակտիկայի համապատասխան:



### ԿԱՇՄԱԿԵՐՊՈՒՄ

## 3.3.Պարտականությունները և պատասխանատվությունը

3.3.1. Գործատուն պետք է կրի պարտավորություն և պատասխանատվություն աշխատողի անվտանգության, առողջության պահպանման համար և կազմակերպությունում ապահովի աշխատանքի պաշտպանությանն ուղղված գործունեություն:

3.3.2. Գործատուն և բարձրաստիճան ղեկավարները պետք է բաժանում կատարեն պարտավորությունները, պատասխանատվությունը և լիազորությունները ԱՊՀԿ-ի մշակման, իրագործման և արդյունավետ գործունեության համար, իրականացնեն աշխատանքի պաշտպանության ուղղված նպատակները:

Պետք է սահմանվի կառուցվածքներն ու գործընթացները, որոնք

- ապահովեն են աշխատանքի պաշտպանության կառավարումը բոլոր մակարդակներում ընդունված ու հայտնի կառավարման գծային ֆունկցիաների տեսքով:
- որոշեն և կազմակերպության մասնակիցներին են ներկայացնեն այն անձանց պարտավորությունները, պատասխանատվությունները և լիազորությունները, որոնք հայտնաբերում, գնահատում կամ կարգավորում են աշխատանքի պաշտպանության վտանգներն ու ռիսկերը:
- անհրաժեշտության դեպքում իրականացնում են արդյունավետ օպերատիվ կառավարում՝ աշխատողների անվտանգության և առողջության պահպանումը երաշխավորելու համար:
- նպաստում են կազմակերպության անդամների միջև համագործակցության ու ինֆորմացիայի /տեղեկատվության/ տրամադրմանն ու փոխանակմանը՝ ներառյալ աշխատողներին և նրանց ներկայացուցիչներին, ԱՊՀԿ-ի տարրերի իրականացման ժամանակ:
- Հետուում են ԱՊՀԿ-ի ներդնան սկզբունքներին, որոնք ներառված են համապատասխան ազգային և մասնագիտացված Զեռնարկներում կամ կազմակերպության կողմից կատարվող կամավոր ծրագրերում:
- հաստատում և իրականացնում են աշխատանքի պաշտպանության հստակ քաղաքականությունն ու նպատակները:
- սահմանում են արդյունավետ միջոցառումներ վտանգների և ռիսկերի նույնականացման, և հեռացման կամ սահմանափակման համար և նպաստում են աշխատավայրում առողջության պահպանմանը:
- սահմանում են ծրագրեր կապված պրոֆիլակտիկ հիվանդությունների և առողջության բարելավման հետ:

- Երաշխավորված ապահովել արդյունավետ միջոցառումներ աշխատանքի պաշտպանության քաղաքականության իրականացմանը, աշխատողներին և նրանց ներկայացուցիչներին լրիվ մասնակցության համար:
- Մորամադրել անհրաժեշտ ռեսուրսներ, որպեսզի կոմիտեի մասնակիցները ճիշտ կարողանան իրականացնել իրենց գործառույթները, և
- Երաշխավորված արդյունավետ միջոցառումներ աշխատանքի պաշտպանության գործող կոմիտեներում աշխատողների և նրանց ներկայացուցիչներին լրիվ մասնակցության ապահովման համար:

3.3.3. Ամենուր, որտեղ պահանջվում է բարձրաստիճան դեկավարներ պետք է նշանակվեն այնպիսի անձինք, որոնց պարտավորությունները, պատասխանատվությունը և լիազորությունները ուղղված են`

- ԱՊՀԿ-ի գարգացման, իրականացման, պարբերաբար վերլուծության և գնահատման համար;
- ԱՊՀԿ-ի գործառույթների արդյունքների մասին պարբերաբար հաշվետվությունների ներկայացմանք բարձրագույն դեկավարությանը, և
- աջակցություն կազմակերպության բոլոր անդամների համագործակցմանը:

### **3.4.Կոմպետենտություն<sup>2</sup> և նախապատրաստվածություն**

3.4.1. Աշխատանքի պաշտպանության կոմպետենտության /իրազեկություն/ նկատմամբ անհրաժեշտ պահանջները պետք է որոշվի գործատուի կողմից: Ընդ որում պետք է սահմանել և օժանդակել աշխատանքային պայմաններում միջոցառումներ, որոնք ապահովում են պաշտոնական պարտականությունների և պատասխանատվության կատարման համար անհրաժեշտ որակավորման առկայություն, որոնք վերաբերվում են առողջության և անվտանգության ապահովմանը:

3.4.2.Գործատուն պետք է լինի կոմպետենտ /կամ հնարավորություն ունենա դաշնայու/ աշխատանքի պաշտպանության մակարդակում աշխատանքային վտանգների և ռիսկերի որոշման, հաստատման կամ կարգավորման և ԱՊՀԿ-ի իրականացման համար:

3.4.3.Միջոցառումների շրջանակում իրականացվող նախապատրաստական ծրագրերը, որոնք նշված են 3.4.1.կետում և պետք է.

- Համապատասխան կարգով Ընդգրկեն կազմակերպության բոլոր մասնակիցներին
- իրականացվի կոմպետենտ անձանց կողմից,
- Համապատասխան պարբերականությամբ վերանայվի արդյունավետ, սկզբնական ու կրկնվող նախապատրաստական աշխատանքներ,
- Նախապատրաստական նյութի յուրացման համար գնահատել ունկնդիրներին հասանելիությունը և կայունությունը,
- պարբերաբար վերլուծել: Վերլուծությունը պետք է ներառի աշխատանքի պաշտպանության կոմիտեի մասնակիցների նախապատրաստման վերլուծությունը այնտեղ, որտեղ այն գոյություն ունի և անհրաժեշտության ռեալիտմ փոփոխվող նախապատրաստական ծրագրի արդյունավետության և համապատասխանության երաշխավորումը, և
- Փաստաթղթավորել կազմակերպության գործունեության սահմանած կարգին և բնութագրերին համապատասխան:

3.4.4. Նախապատրաստումը պետք է իրականացվի բոլոր ունկնդիրների հետ անվճար և հնարավորության դեպքում աշխատանքային ժամերին:

---

<sup>2</sup> աշխատանքի պաշտպանության կոմպետենտությունը ներառում է կրթությունը, աշխատանքային փորձն ու պատրաստվածությունը կամ ել դրանց համադրությունը

### **3.5. ԱՊՀԿ-ի փաստաթղթավորումը**

3.5.1. Կազմակերպության գործունեության չափերին և բնույթին համապատասխան պետք է սահմանվի ԱՊՀԿ-ի փաստաթղթերի համակարգը, որն կարող է ընդգրկել.

- Կազմակերպությունում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ նպատակներն ու քաղաքականությունը,
- Աշխատանքի պաշտպանության կառավարման դերերի բաշխումը և պարտականությունները ԱՊՀԿ-ի իրագործման համար,
- Կազմակերպության գործունեությունից բխող առավել նշանակալի վտանգները/ ռիսկերը և դրանց նախազգուշացման ու կարգավորմանն ուղղված միջոցառումները,
- ԱՊՀԿ-ի շրջանակներում օգտագործվող կանոնադրությունը, մեթոդները, հրահանգներն ու այլ ներքին փաստաթղթեր:

3.5.2. ԱՊՀԿ-ի փաստաթղթավորումը պետք է.

- լինի պարզ շարադրված և օգտագործողների համար հասկանալի ծևակերպված:
- պարբերաբար վերլուծվի, անհրաժեշտության դեպքում նորացվի, տարածվի և լավ հասանելի լինի կազմակերպության բոլոր անդամների համար, ում վերաբերվում կամ ում համար նախատեսված է:

3.5.3. Աշխատանքի պաշտպանության տվյալները պետք է սահմանվի ու կարգավորվի աշխատանքային վիճակում կազմակերպության պահանջներին համապատասխան վայրում:

3.5.4. Աշխատողները պետք է մուտքի իրավունք ունենան տվյալների բազա,որը վերաբերվում է նրանց առողջությանն ու արտադրական միջավայրին,գաղտնիության պահպանման պայմանով:

3.5.5. Աշխատանքի պաշտպանության մասին տվյալները ներառում են.

- ԱՊՀԿ-ի իրականացման մասին տվյալներ,
- Աշխատանքային վճառվածքների,առողջության վատթարացման,միջադեպերի և հիվանդությունների հետ կապված տվյալներ,
- Ազգային օրենքներից ու կանոններից բխող աշխատանքի պաշտպանության մասին տվյալներ,
- Աշխատողների վրա վնասակար արտադրական գործուների ազդեցության և աշխատողների առողջական վիճակի ու արտադրական միջավայրի մասին տվյալներ, և
- գործող և անդրադարձող մոնիթորինգի արդյունքները:

### **3.6. Տեղեկատվության հաղորդումն ու փոխանակումը**

3.6.1.Անհրաժեշտ է սահմանել աշխատանքային պայմաններում միջոցառումներ և ընթացակարգեր, որպեսզի.

- Աշխատանքի պաշտպանության հետ կապված ներքին և արտաքին հաղորդագրությունների ստացումն ու փաստաթղթավորումը,
- Աշխատանքի պաշտպանության մասին արտաքին տեղեկատվության երաշխավորված հաղորդումն ու փոխանակումը կազմակերպության համապատասխան մակարդակների և կառուցվածքների միջև:
- Երաշխավորում ,որ աշխատանքի պաշտպանության մասին աշխատողների և նրանց ներկայացուցիչների հարցումները,գաղափարները և առաջարկները ստացվել են,ուսումնասիրվել և նրանց անպայման կտրվի պատասխան:

## ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

### ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

#### 3.7. Ելակետային վերլուծություն

3.7.1. Ելակետային վերլուծության արդյունքում գնահատվում են կազմակերպությունում գոյություն ունեցող ԱՊՀԿ-ն և հաճապատասխան միջոցառումները պահանջված կարգով։ Այնտեղ, որտեղ գոյություն չունի ԱՊՀԿ կամ կազմակերպությունը ստեղծվում է վերստին, ապա ելակետային վերլուծությունը հիմք է հանդիսանում ԱՊՀԿ-ի ստեղծման համար։

3.7.2. Ելակետային վերլուծությունը պետք է իրականացվի կոմայետենտ անձանց կողմից աշխատողների և նրանց ներկայացուցիչների հետ խորհրդատվությամբ։ Այն պետք է-

- որոշի գործող ազգային օրենքներն ու կանոնները, ազգային և մասնագիտացված Ձեռնարկը, կամավոր ծրագրերը և այլ պահանջներ, որոնց հետևում է կազմակերպությունը։
- նույնականացնել, կանխատեսել, գնահատել անվտանգության և առողջության համար վտանգներն ու ռիսկերը, որոնք բխում են կազմակերպության աշխատանքից և գոյություն ունեցող, կամ ենթադրվող արտադրական միջավայրից,
- որոշել, թե հանդիսանում են արդյոք պլանավորված կամ գործող պաշտպանական միջոցները բավարար վտանգների հեռացման, կամ ռիսկերի սահմանափակման համար և
- վերլուծել աշխատողների առողջական վիճակի հսկողության նախն տվյալները։

3.7.3. Ելակետային վերլուծության արդյունքները պետք է-

- լինեն փաստաթղթավորված,
- հիմք հանդիսանան որոշումների ընդունման համար, որոնք վերաբերվում են ԱՊՀԿ-ի իրականացմանը,
- որոշել հիմնական մակարդակը, որի համեմատությամբ պետք է գնահատել կազմակերպությունում ԱՊՀԿ-ի անընդհատ կատարելագործումը։

#### 3.8. ԱՊՀԿ-ի պլանավորումը, գարգացումը և իրագործումը (ԾՅՕՏ)

3.8.1. Պլանավորման նպատակն է ԱՊՀԿ-ի ստեղծումը, որը աջակցում է

- նվազագույնը ազգային օրենքներին և կանոններին համապատասխանեցումը,
- կազմակերպությունում ԱՊՀԿ-ի հիմնական տարրերը և
- աշխատանքի պաշտպանության անընդհատ կատարելագործումը։

3.8.2. Պետք է իրականացվեն միջոցառումներ աշխատանքի պաշտպանության պլանավորման համար, որը հիմնված է վերջնական վերլուծությունների արդյունքների, հետևողական վերլուծությունների և այլ տվյալների վրա։ Պլանավորման այս միջոցառումները պետք է ներդնել աշխատավայրում առողջության և անվտանգության պահպանման համար, որն իր մեջ ներառում է.

- կազմակերպությունում աշխատանքի պաշտպանության նպատակների քանակական գնահատման հստակ որոշումն ու առաջնահերթության դասակարգումը,
- յուրաքանչյուր նպատակի իրականացման պլանավորում՝ պարտականությունների բաշխմամբ և գործունեության արդյունքների հստակ չափանիշներով,որոնք ցույց են տալիս՝ ինչ պետք է կատարվի, ում կողմից և եր,
- չափանիշների ընտրություն համեմատելու և հաստատելու,որ նպատակները հաղթահարված են,
- բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսների տրամադրում, և կախված իրավիճակից տեխնիկական աջակցություն:

3.8.3.Կազմակերպությունում Աշխատանքի պաշտպանության պլանավորման միջոցառումները պետք է ներառեն ԱՊՀԿ-ի բոլոր տարրերի մշակումը,զարգացումը և իրագործումը,որը նկարագրված է 3-րդ գլխում սույն ուղեցույցի և ներկայացված է նկար 2-ում:

## **3.9. Աշխատանքի պաշտպանության նպատակները**

3.9.1. Աշխատանքի պաշտպանության քաղաքականության համապատասխան և վերջնական ու հետևողական վերլուծությունների հիման վրա պետք է սահմանել աշխատանքի պաշտպանության նպատակները,որոնք պետք է լինեն.

- կազմակերպության համար յուրահատուկ,ինչպես նաև նրա գործունեության չափսերին ու բնույթին համապատասխան ու ընդունելի,
- ազգային օրենքների, կանոնների ընդունված ու պահանջներին համապատասխան և աշխատանքի պաշտպանությանն առնչվող կազմակերպության տեխնիկական, առևտրային պարտավորություններին համաձայնեցված:
- ուղղված աշխատողների աշխատանքի պաշտպանության միջոցառումների անընդհատ կատարելագործմանը՝առավել բարձր արդյունքների հասնելու համար,
- իրական և հասանելի,
- փաստաթղթավորված և կազմակերպության բոլոր ֆունկցիոնալ կառուցվածքներին և նակարդակներին հասցված, և
- պարբերաբար գնահատվող և անհրաժեշտության դեպքում նորացվող:

## **3.10.Վտանգների կանխարգելումը**

### **3.10.1. Նախազգուշական և կարգավորող միջոցներ**

3.10.1.1. Աշխատողների առողջության և անվտանգության ռիսկերն ու վտանգները պետք է օպերատիվ կարգվ նույնականցվեն ու գնահատվեն: Նախազգուշական և կարգավորող միջոցները պետք է իրագործվեն հետևյալ հաջորդականությամբ.

- Վերացնել վտանգները/ռիսկերը
- Վտանգների սահմանափակումը սկզբնաղբյուրում կոլեկտիվ պաշտպանության տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ կազմակերպչական միջոցներ,
- անվտանգության արտադրական նախագծերի միջոցով վտանգների նվազագույնի հասցնել ներառյալ վնասակար արտադրական գործոնների հետ շփման ժամանակի սահմանափակումը:
- այնտեղ,որտեղ մնացած ռիսկերը չեն կարող սահմանափակվել կոլեկտիվ պաշտպանության միջոցներով,գործառուն պետք է անվճար տրամադրի համապատասխան միջոցներ

անհատական պաշտպանության համար՝ ներառյալ հատուկ զգեստներ, և ձեռնարկի միջոցներ դրանց օգտագործման և տեխնիկական ծառայություններն ապահովելու համար:

3.10.1.2. Պետք է սահմանել ըմբացակարգեր կամ միջոցառումներ վտանգների նախազգուշացման և կարգավորման համար, որոնք պետք է.

- համապատասխանեն կազմակերպությունում ուսումնասիրվող վտանգներին ու ռիսկերին,
- պարբերաբար վերլուծել և անհրաժեշտության դեպքում կատարելագործել,
- հետևել ազգային օրենքներին և կանոններին, արտացոլել առաջադեմ փորձը, և
- հաշվի առնել գիտելիքների ներկա վիճակը՝ ներառյալ կազմակերպության մասին տեղեկատվությունը և հաշվետվությունները, ինչպիսիք են Աշխատանքի տեսչությունը, աշխատանքի պաշտպանության և այլ ծառայություններ, իրադրությանը համապատասխան:

### 3.10.2. Փոփոխությունների կառավարումը

3.10.2.1. Աշխատանքի պաշտպանության վրա ներքին /օրինակ աշխատանքի ընդունումը, նոր տեխնոլոգիական և աշխատանքային գործընթացները, ընկերության ծեռք բերումն ու կազմակերպության կառուցվածքը/ և արտաքին փոփոխությունների /օրինակ ազգային օրենսդրության կատարելագործումը, կազմակերպությունների միաձուլումը, աշխատանքի պաշտպանության գիտելիքների և տեխնոլոգիաների զարգացումը և այլն/ ազդեցությամբ պետք է գնահատվի, իսկ համապատասխան նախազգուշացնող միջոցները պետք է իրականացվեն մինչ փոփոխությունները:

3.10.2.2. Ցանկացած փոփոխություններից կամ նոր աշխատանքի ձևի, նյութերի, գործընթացների կամ սարքավորումների ներդնումից առաջ աշխատավայրում պետք է գնահատվեն ռիսկերը: Այդպիսի գնահատումը պետք է կատարվի խորհրդատվության տեսքով և որտեղ անհրաժեշտ է աշխատողների, նրանց ներկայացուցիչների և աշխատանքի պաշտպանության կոմիտեի մասնակցությամբ:

3.10.2.3. «Փոփոխությունների մասին որոշման» դեպքում պետք է կազմակերպության բոլոր անդամները պետք է երաշխավորված տեղեկացվեն և պատրաստվեն, որոնց վերաբերվում է այդ որոշումը:

### 3.10.3. Վթարային իրադարձությունների նախազգուշացումը, պատրաստվածությունը դրանց նկատմամբ և վերաբերմունքը

3.10.3.1. Պետք է իրականացնել միջոցառումներ կապված վթարային իրադրությունների նախազգուշացման, պատրաստվածության և դրանց կարգավորման հետ: Այդ միջոցառումները պետք է որոշեն դժբախտ դեպքերի և վթարային իրավիճակների հնարավոր բնույթն ու չափսերը, կանխատեսեն ռիսկերը: Բոլոր միջոցառումները պետք է մշակված լինեն կազմակերպության գործունեության չափսերին համապատասխան: Նրանք պետք է.

- երաշխավորեն վթարային իրավիճակներում աշխատավայրում գտնվող բոլոր աշխատողների պաշտպանության համար անհրաժեշտ ինֆորմացիայի առկայությունը, ներքին հաղորդակցության կողրդինացումը և համագործակցությունը:
- տրամադրեն ինֆորմացիա կոմիտենտ մարմիններին, տարածքային հարակից կառույցներին և վթարային ծառայություններին՝ ապահովելով նրանց միջև հաղորդակցությունը:
- նախատեսել բժշկական առաջին օգնություն, հակարդեհային միջոցառումներ և աշխատավայրում գտնվող բոլորի տարածանման կազմակերպում:
- տրամադրել համապատասխան ինֆորմացիա և կազմակերպության բոլոր մասնակիցներին հնարավորություն տալ պատրաստվելու պարբերաբար իրականացվող մարզումներին՝ վթարային իրավիճակների նախազգուշացման, պատրաստվածության համար:

3.10.3.2. Վթարային իրավիճակների նախազգուշացման միջոցառումները և դրանց պատրաստվածությունը պետք է սահմանել արտաքին վթարային ծառայությունների և այլ մարմինների հետ համատեղ:

### 3.10.4. Մատակարարում

3.10.4.1. Պետք է սահմանել աշխատանքային պայմանների ընթացակարգեր,որոնք երաշխավորում են,որպեսզի.

- կազմակերպությունում առողջության և անվտանգության պահպանման պահանջները լինեն նույնականցված,գնահատված և ներառվեն նյութատեխնիկական մատակարարման և վարձակալման պայմաններում,
- ազգային օրենքների և կանոնների պահանջները,ինչպես նաև կազմակերպության սեփական պահանջները աշխատանքի պաշտպանության մասին նույնականացվեն մինչ ապրանքների և ծառայությունների ձեռք բերումը,
- նշված պահանջներին հասնելու համար իրականացվող միջոցառումները պետք է կատարվեն մինչ ապրանքների և ծառայությունների օգտագործումը:

### 3.10.5. Պայմանադրային աշխատանքներ

3.10.5.1.Պետք է սահմանել միջոցառումներ,որոնք երաշխավորում են աշխատանքի պաշտպանության մասին կազմակերպության պահանջները և ծայրահեղության դեպքում նրանց համարժեքությունը,որը կիրառվում է պայմանադիրների և նրանց աշխատողների վրա:

3.10.5.2. Կազմակերպության հրապարակում աշխատող պայմանադիրների նկատմամբ միջոցառումները պետք է.

- ներարի աշխատանքի պաշտպանության չափանիշները պայմանադիրների գնահատման և ընտրության ընթացակարգերում,
- արդյունավետ մշտական կապ հաստատել և համակարգել կազմակերպության կառավարման համապատասխան մակարդակների և պայմանադիրների միջև մինչ աշխատանքի սկիզբը: Ընդ որում պետք է պայմաններ ստեղծել վտանգների մասին տեղեկացնելու և միջոցներ ձեռնարկել նրանց ազդեցությունը սահմանափակելու և նախազգուշացնելու համար,
- կազմակերպությունում աշխատանքների համար միջոցառումներ իրականացնել վնասվածքների,առողջության վատացման,հիվանդությունների և միջարեալի ծանուցման համար,
- աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման համար իրականացնել համապատասխան իրազեկում և աշխատանքը սկսելուց առաջ անհրաժեշտության դեպքում նախապատրաստել պայմանադիրներին և նրանց աշխատողներին:
- մեթոդաբար հետևել պայմանադիրների աշխատանքի պաշտպանության պահանջներին համապատասխան կազմակերպության հրապարակում/հարթակում:
- երաշխավորել, որ աշխատանքի պաշտպանության պահանջվող ընթացակարգը և միջոցառումները կազմակերպությունում պետք է իրականացվի պայմանադիրների կողմից:

### ԳՆԱՀԱՏՈՒՄ

#### 3.11. Մոնիթորինգի իրականացումը և արդյունքների գնահատումը

3.11.1.Աշխատանքի պաշտպանության գործունեության հետևումը,չափումն ու հաշվառումը նշտապես իրականացվող ընթացակարգեր են, որոնք պետք է մշակվի, հաստատվի և պարբերաբար վերլուծվի: Պարտականությունները, պատասխանատվությունն ու մոնիթորինգի իրականացման համար տրվող լիազորությունները կառավարման տարբեր կառուցվածքներում պետք է բաշխվեն:

3.11.2.Արդյունքների գնահատման ցուցանիշների ընտրությունը պետք է կատարել կազմակերպության գործունեության չափերին, բնույթին համապատասխան և աշխատանքի պաշտպանության նպատակներով:

3.11.3. Պետք է ուշադրության արժանանան, ինչպես որակական, այնպես էլ քանակական չափորչիներ,որոնք համապատասխանում են կազմակերպության պահանջներին:Նրանք պետք է.

- հիմնվեն կազմակերպությունում նոյնականացված վտանգների և ռիսկերի վրա; ընդունված պարտավորությունների և կապված լինեն աշխատանքի պաշտպանության նպատակների և քաղաքականության հետ:
- աջակցեն կազմակերպության գործունեության գնահատման գործընթացին, ներառյալ վերլուծեն դեկավարության կառավարման արդյունավետությունը:

3.11.4. Մոնիթորինգի իրականացումը և արդյունքների գնահատումը պետք է .

- օգտագործել որպես միջոց աշխատանքի պաշտպանության քաղաքականության և նպատակների իրագործման մակարդակի որոշման և ռիսկերի կարգավորման համար,
